ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

ք. Երևան «07» հոկտեմբերի 2024 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 218-Ա/Ք

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ԿԻՑ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՆԻՍՏ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ԵՎ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահի 2024 թվականի մայիսի 13-ի N 149-Ա/Ք հրամանի N 1 հավելվածով հաստատված Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահին կից աշխատանքային խմբի աշխատակարգի 4-րդ, 7-րդ և 8-րդ կետերով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. 2024 թվականի հոկտեմբերի 11-ին՝ ժամը 16:00-ին հրավիրել Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահին կից աշխատանքային խմբի նիստ՝ հետևյալ օրակարգով.

1) միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում ներառված առաջատար ամսագրերում կամ հրատարակչություններում գիտական աշխատանքների հրատարակման ծախսերը փոխհատուցելու հայտի գնահատման թերթիկի ձևի հաստատում,

2) միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում ներառված առաջատար ամսագրերում կամ հրատարակչություններում գիտական աշխատանքների հրատարակման ծախսերը փոխհատուցելու՝ բուհերից և գիտական կազմակերպություններից ներկայացված հայտերի գնահատում,

3) արշավախումբ կազմակերպելու՝ գիտական կազմակերպություններից ներկայացված գրությունների քննարկում,

4) գիտական միջոցառումների կազմակերպման համար ֆինանսական աջակցության տրամադրման՝ բուհերից և գիտական կազմակերպություններից ներկայացված հայտերի գնահատում,

5) միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում ներառված առաջատար ամսագրերում կամ հրատարակչություններում գիտական աշխատանքների հրատարակման

ծախսերը հայտատու կազմակերպություններին փոխհատուցելու նպատակահարմարության վերաբերյալ առաջարկության ներկայացում,

6) արշավախումբ կազմակերպելու համար ֆինանսական միջոցներ տրամադրելու նպատակահարմարության վերաբերյալ առաջարկության ներկայացում,

7) գիտական միջոցառումների կազմակերպման համար ֆինանսական աջակցության տրամադրման հայտերը ֆինանսավորման երաշխավորելու և ֆինանսավորման ծավալների մասին առաջարկության ներկայացում:

2. Նիստը նախագահելը և վարելը հանձնարարել Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահի տեղակալ Հարություն Սարգսյանին:

ԱՐՏՈՒՐ ՄՈՎՍԻՍՅԱՆ

(պարտականությունները կատարող)